բին. սկսում է հայհոյել պարսկահպատակներին նրանց «բէկէյ-բաթ» ասելով։

Խփում էր Արաքսը իր ալիքները ափի չոր աւազին, նորից յետ նահանջում, կարծես նոր ոյս էր ցանկանում և բարկացած թողնում էր աւազի վրայ իր սպիտակ փրփուրը։ Խեղդուածների յետևից քաշում էին լուռ ու մունջ պանդուխտների նոր խմբեր։ Նրանք կանգ առին և սկսեցին երկար վիճել պատահարի մասին։

—Վալլահ, բիլլահ համշարիները նրա համար խեղդուեցին, ասում էին նրանք, որ այսօր Ջումա է, մեր կիրակի օրն է, բայց մեզ ստիպում են գործել, աշխատել, քանդում են մեր Ջումէն։

Ռուբէն Գրիգորեանց

ԿԸ ԳԱՑ ԳԱՐՈՒՆ...

Կը գայ գարուն խաս շորերով
Խաս շորերը փայլ կուտան,
Նախշուն հաւքեր վառ երգերով
Սար ու ձորին ձէն կուտան։
Ու հաւքերի ձէնը անուշ
Կընկնէ սիրտս, կը թնդայ.
Վեր կաց, ախպէր, գարուն եկաւ,
Տես, գարունդ ետ կուգայ։
Խորը քնից ես կը զարթնիմ,
Սար դարդերս շուռ կուտամ,
Սէր երգերի քնարս առած
Գարուն եարիս տես կերթամ։
Ոտքերիս տակ վարդ, ծաղիկներ
Կը շողշողան, բոյր կուտան,
Լերկ անապատ, սև, սև ժայռեր
Քաղցր ու անուշ կը ժպտան։
Ու թև կառնեմ ու կը թռչեմ
Արտ ու ափով, արօտով,
Ու կ'այրուեմ ու կը խնդամ
Գարուն եարիս կարօտով։

Սմբատ Ուզբաշեան